* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ ինձ այլևս վիճակված չի լինի Սուրբ Էջմիածնում տեսնելու մեր դարաշրջանի ամենաիմաստուն մարդկանցից մեկին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին: Այդ հիրավի բիբլիական մարդու հետ ամեն մի հանդիպում բազմապատկում էր հոգուս կորովը, ուժ տալիս պայքարելու բոլոր նրանց դեմ, ովքեր, ի խախտումն մարդու իրավունքների, ղարաբաղցուն զրկում են իր հողում ապրելու, մայրենի լեզվով խոսելու, իր Աստծուն հավատալու հնարավորությունից:

Ես լավ գիտեմ, որ Վազգեն Առաջինը շատ բան է արել, որ Ղարաբաղի երկնքում ողողանջեն հայկական տաճարների զանգերի աստվածային հընչյունները: Կարծում եմ նրա համար լավագույն հուշարձանը կլինի վերածնված կյանքը Ղարաբաղի ազատ հողի վրա:

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈՂԱՅՆ ՔՈՔՍ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓՈԽԽՈՍՆԱԿ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստան

Նորին Սրբություն Պապ Ծենուդա Գ-ն և Ղպտական Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները իրենց անկեղծ ցավակցությունն են հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան կապակցությամբ: Մենք խորին երախտագիտությամբ հիշում ենք, թե նա ինչպիսի հմտությամբ էր ղեկավարում Հայ Առաքելական Եկեղեցին 1955 թվականից սկսած: Նա մարմնավորեց իր մեջ հայերի ազգային ինքնությունը և համաշխարհային առաջին պատերազմից հետո աշխարհով մեկ սփռված հայերի համար Հայ Եկեղեցին դարձրեց ազգային ինքնության խորհրդանիշ և հոգևոր կյանքի աղբյուր՝ հատկապես Սովետական Հայաստանում իշխող պաշտոնական աթեիզմի ժամանակաշրջանում·

Թող մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, հանգստություն տա նրա հոգուն իր արքայության մեջ և արժանացնի նրան երկնային պսակի:

ՍՐԱՊՐԻՈՆ
ՂՊՏԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կահիրե, 25 օգոստոս 1994 թ.

* * *

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Հայաստան

Քոթայամի Ուղղափառ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողների և անձամբ իմ անունից խորագույն ցավակցություններ եմ հայտնում ճանաչված եկեղեցական, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան առթիվ:

Թող Աստված հանգստություն շնորհի նրա հոգուն և Հայոց Եկեղեցին օժտի Աստուծո ընտրյալ հաջորդով:

ԳՐԵԳՈՐԻՈՍ
ԴԵԼԻԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Քոթայամ, 23 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Խորապես վշտացած եմ Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան առթիվ: Խնդրում եմ ամենաողորմած Աստծուն, որ խաղաղություն և հանգստություն պարգևի նրա հոգուն:

ՖԻԼԱՐԵՏ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Նին, 20 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստան

Մեծ վշտով իմացանք Նորին Սրբություն Վազգեն Առաջինի վախճանման լուրը: Հայտնում ենք մեր անկեղծ ցավակցությունները և աղոթում հանգուցյալ Հայրապետի հոգու խաղաղության համար:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴ

Կիև, 20 օգոստոս 1994 թ.

* * *

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Խորապես հուզված Նորին Սրբություն Վազգեն Ա-ի մահվամբ՝ Հայ Առաքելական Եկեղեցու պատասխանատու հոգևորականներին և բոլոր հավատացյալներին փոխանցում եմ իմ ջերմ համակրանքի և աղոթքների հավաստիքը:

ԿԱՐԴԻՆԱԼ ԴԸ ԿՈՒՐՏՐԱՅ
ԼԻՈՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լիոն, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Խոր վշտով իմացա սիրելի Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը: Երկար տարիներից ի վեր եղբայրական բարեկամությամբ ես հոգեպես կապված էի Նորին Սրբությանը: Թե՛ Սուրբ Էջմիածնում և թե՛ Մարսելում տեղի ունեցած մեր ջերմ հանդիպումների վառ հիշատակով՝ խնդրում եմ Ձեզ իմ համակրանքի և աղոթքների հավաստիքը հայտնել Հայ Առաքելական Եկեղեցուն:

ԿԱՐԴԻՆԱԼ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅ

Վատիկան, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՂՅԱՆԻՆ

Էջմիածին, Հայաստան

Սիրելի Սրբազան,

Հենց նոր խորին վշտով ընդունեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը: Մեր ընկերության անունից, որը, ինչպես գիտեք, սերտ հարաբերությունների մեջ է ձեր Եկեղեցու հետ, հայտնում ենք Ձեզ մեր միասնությունը վշտի այս պահին: Աստված ձեզ պահապան:

ԴԱՎԻԹ ՎԵՅԴՄԱՆ
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բիեն, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն

Ֆրանցիսկյան միաբանության անունից հայտնում եմ իմ խորին ցավակցությունը Հայ Առաքելական Եկեղեցուն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան կապակցությամբ: Ես միանում եմ Հայ Եկեղեցուն իր միջնորդական աղոթքներում և խնդրում Տիրոջը, որ ընդունի հանգուցյալ Կաթողիկոսի հոգին խաղաղության իր օթևանի մեջ:

ՋՈՒԶԵՊՊԵ ՆԱԶԶԱՐՈ
ԿՈՒՍՏՈԴ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲԱՎԱՅՐԻ

Երուսաղեմ, 23 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՂՅԱՆԻՆ

Քրիստոնյաների միության իրականացման համար գործող քահանայապետական խորհուրդը միանում է Հայ Առաքելական Եկեղեցու և Ս. Էջմիածնի կաթողիկոսության վշտին: Մենք անմոռանալի վառ հիշատակներ ենք պահում Սուրբ Էջմիածնում, Հռոմում և Եվրոպական տարբեր մայրաքաղաքներում Կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ մեր ունեցած բազմաթիվ հանդի-

պումներից: Նա մշտապես մտահոգված էր քրիստոնեական Եկեղեցիների միջև եղբայրական կապերը զարգացնելու և ամրապնդելու գաղափարով: Թող Տերը վարձահատույց լինի իր Եկեղեցու այս մեծ ապաստավորին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԻԴՐԻՍ ԿԱՍԻԴԻ
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԻԵՌ ԴՅՈՒՊՐԵ
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վատիկան, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Իմանալով Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան տխուր լուրը, բերում եմ Ձերդ Գերաշնորհությանը իմ անկեղծ վշտակցության և խոր համակրանքի արտահայտությունը: Հուզումով եմ հիշում հանգուցյալ Կաթողիկոսի հոգու վեհությունն ու եղբայրական պարզությունը դեռ վերջերս տեղի ունեցած մեր հանդիպման ընթացքում՝ Հայաստան կատարած իմ այցելության առիթով:

Թող բարի և ողորմածն Աստված իր լույսի և հավերժական խաղաղության օթևանում ընդունի Հայ Եկեղեցու և ժողովրդի այս մեծ ապաստավորին: Թող հավերժական լինի նրա հիշատակը:

ԿԱՐԴԻՆԱԼ ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ

Վատիկան, 20 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան լուրը ցնցեց քրիստոնյա աշխարհը և երկրագնդով մեկ ապրող հայերին: Ես բաժանում եմ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վիշտը և մասնակցում ձեր Եկեղեցու աղոթքներին:

Հանգուցյալ Կաթողիկոսը ձեր Եկեղեցու հոչակավոր առաջնորդը եղավ բավականին ծանր ժամանակահատվածում: Սակայն Աստված նրան արժանացրեց, որ իր Եկեղեցու վերածնունդը տեսնի Հայաստանում կրոնի ազատության նոր շրջանում:

Իմ հիշողության մեջ վառ է մնացել 1970 թվականի մայիսի 8—12 օրերին նրա այցելությունը Նորին Սրբություն Պողոս Զ Պապին Վատիկանում: Ես հիշում եմ այն խոսքերը, որ Պողոս Զ Պապը ասաց Կաթողիկոսին այն ժամանակ. «Եկեղեցու մեծությունը չի չափվում նրա անդամների թվով, այլ նրա հավատի զորությամբ»:

Այս առթիվ ես հոգեպես միանում եմ ձեզ, միանում եմ Սուրբ Էջմիածնի միաբանության աղոթքներին, որ Նորին Սրբություն Վազգեն Առաջինի հոգին հանգչի Աստուծո խաղաղության մեջ:

Թող Սուրբ Հոգին լուսավորի և առաջնորդի ձեր Եկեղեցին հատկապես այս օրերին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍ

Վատիկան, 24 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻՆ

Հայ Առաքելական Եկեղեցի, Էջմիածին, Հայաստան

Խոր վշտով իմացանք Հայ Առաքելական Եկեղեցու պետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Այս կիրակի, երբ հոգեհանգստյան պատարագներ են մատուցվում աշխարհի բոլոր հայկական եկեղեցիներում, մենք ևս մեր աղոթքներն ու մեր աղերսները միացնում ենք հանգուցյալի հիշատակի ոգեկոչմանը՝ միջնորդ հանդիսանալով նրա հոգու հավերժական խաղաղության համար:

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսում մեր համատեղ գործակցությունից մենք գիտենք, թե Վազգեն Առաջին Կաթողիկոսն որքան էր ներգրավված ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում:

Լինելով Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր առաջնորդ, Նորին Սրբությունը իր անձի մեջ խտացնում էր հայ ժողովրդի ճակատագիրը, նրա տառապանքները և հույսը: Որպես տեսիլքի և աղոթքի մարդ, նա գիտեր, որ իր ժողովրդի ապագան կարող է երաշխավորվել միայն այդ դեպքում, երբ «արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն» (Սաղմոս 85):

Այս ոգով և այս խոհերով մենք Ձեր միջոցով հայտնում ենք մեր անկեղծ ցավակցությունը Հայ Առաքելական Եկեղեցուն՝ բաժանելով ձեր վիշտը հայ ժողովրդին հարվածած ագո այս օրերին:

Ընդունեցեք, Գերաշնորհ Սրբազան, մեր եղբայրական հարգալից սերը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ՀԱՅՆՐԻԽ ՌՈՒՍՏԵՐՀՈԼՑ

ԾՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ